

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՒ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

N	Միջոցառման անվանումը	Կոնվենցիայի հոդվածը	Ակնկալվող արդյունք	Կատարման համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Նշումներ	Եռամսյակներ			
						I	II	III	IV
1									
	1.1 «Կլիմայի մասին» օրենքի ընդունմանն ուղղված հարցերի քննարկում	ՄԱԿ ԿՓՇԿ նախաբան, հոդված 6, Փարիզյան համաձայնագիր, հոդված 2	Կլիմայական փոփոխությունների բացասական հետևանքների դեմ համակարգված և կանոնակարգված պայքարի համար իրավական հիմքի ստեղծում:	Շրջակա միջավայրի նախարարություն		X	X		
	1.2 2025 թվականի պետական բյուջեում կլիմայական նշադրում իրականացնելու մասին ծրագիր նախատեսելու վերաբերյալ քննարկում	ՄԱԿ ԿՓՇԿ	Ծրագրի իրականացման արդյունքում պարզ կդառնա ՀՀ պետական բյուջեով իրականացվող ծրագրերի դրական և բացասական ազդեցությունները կլիմայական քաղաքականության իրականացման վրա, որի շնորհիվ կհստակեցվի երկրի ստանձնած պարտավորություններով կլիմայական թիրախների հասանելիության մակարդակը:	Շրջակա միջավայրի նախարարություն			X	X	
	1.3 Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագրի և 2026-2030 թվականների միջոցառումների ցանկի քննարկում	Փարիզյան համաձայնագիր, հոդված 7	Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառության պատշաճ իրականացում՝ ձևավորելով մինչև 2030 թվականը	Շրջակա միջավայրի նախարարություն					X

N	Միջոցառման անվանումը	Կոնվենցիայի հոդվածը	Ակնկալվող արդյունք	Կատարման համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Նշումներ	Եռամսյակներ				
			դիմադրողականության բարձրացման նպաստավոր պայմաններ ողջ տնտեսության համար, այդ թվում երկրի խոցելիության գնահատում, կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ հարմարվողականության կարողությունների ստեղծում:							
	1.4 Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների Ազգային մակարդակով սահմանված գործողություններով հաստատված միջոցառումների ցանկի 2021-2023 թվականների ընթացքում իրականացված գործողությունների վերլուծություն		Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառության պատշաճ իրականացում՝ ձևավորելով մինչև 2035 թվականը ջերմոցային գազերի արտանետումների կրճատման թիրախ ողջ տնտեսության համար:	Շրջակա միջավայրի նախարարություն						X
	1.5 Ածխածնի գնադյացման, արտանետումների առևտրի համակարգի և/կամ ածխածնային հարկի ներդրման ուսումնասիրություն քննարկում	ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված համաձայնագիր	-Պետական քաղաքականության հստակեցում -Ֆինանսական մեխանիզմների ձևավորում	Շրջակա միջավայրի նախարարություն Ֆինանսների նախարարություն Պետական եկամուտների կոմիտե	Քննարկում դեռևս չի կազմակերպվել					X
	1.6 Փարիզյան համաձայնագրի ներքո ստանձնած պարտավորությունների համատեքստում մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը Հայաստանի առաջին երկամյա թափանցիկության զեկույցի (Bbiannual Transparency Report) ներկայացում:	Փարիզյան համաձայնագիր	Առաջին երկամյա թափանցիկության զեկույցի մշակում, հաստատում և ներկայացում Համաձայնագրի քարտուղարությանը	Շրջակա միջավայրի նախարարություն, այլ շահագրգիռ գերատեսչություններ, ինչպես նաև ԱԳՆ՝ զեկույցի մշակման հարցում միջազգային համագործակցության անհրաժեշտության դեպքում	Հարցի վերաբերյալ ՀՀ-ին դեմարշ է ներկայացրել ԱՄՆ-ը՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ ընդհանուր զեկույցի ներկայացման նախապատրաս				x	

N	Միջոցառման անվանումը	Կոնվենցիայի հոդվածը	Ակնկալվող արդյունք	Կատարման համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Նշումներ	Եռամսյակներ			
					<p>տական աշխատանքներ ի վերաբերյալ, և պատրաստակամություն հայտնելով աջակցել փորձի փոխանակման և այլ հարցերում: Նման զեկույցների մշակման համար հնարավոր է ստանալ ֆինանսական աջակցություն Գլոբալ բնապահպանական հիմնադրամից (GEF) և այլ դոնորներից: ԱՄՆ հարցադրումներ ի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է Շրջակա միջավայրի նախարարությունից: Դիտարկվում է այն հայցող կողմին տրամադրելու հարցը:</p>				

N	Միջոցառման անվանումը	Կոնվենցիայի հոդվածը	Ակնկալվող արդյունք	Կատարման համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Նշումներ	Եռամսյակներ			
2									
	2.1 Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագծի առաջադրանքի մշակման շրջանակներում կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների և դրույթների ամրագրում		-Պետական քաղաքակա- նության հստակեցում -ծրագրերի իրագործման նպատակով ճանապարհային քարտեզի մշակման դրույթների ամրագրում	ՀՀ քաղաքաշինության կոմիտե	Մշակման փուլում է		X		
	2.2 Քաղաքաշինական նորմերի վերանայում կլիմայի հարմարվողականության դրույթների շրջանակում		2024 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին քաղաքաշինության բնագավառի մշակված և արդիականացված նորմատիվ փաստաթղթերում կլիմայի հարվարվողականության միջոցառումների ապահովման պահանջների ներառում:	ՀՀ քաղաքաշինության կոմիտե					X
	2.3 Կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմացման հարցերի ներառումը կրթական ծրագրերում	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի 6-րդ և Փարիզյան համաձայնագրի 11-րդ և 12-րդ հոդվածներ	- Ստեղծված են ուսումնական նյութեր, բնապահպանական խաղեր -Իրականացված են 7-12-րդ դասարանների ուսուցիչների վերա-պատրաստում՝ կլիմայի փոփոխության նախագծային կրթության շրջանակում «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոն»-ի (ԿԶՆԱԿ) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ կլիմայի փոփոխության և ուսումնական նախագծային աշխատանքների իրա- կանացման վերաբերյալ	ՀՀ ԿԳՄՍՆ		X	X	X	X

N	Միջոցառման անվանումը	Կոնվենցիայի հոդվածը	Ակնկալվող արդյունք	Կատարման համար պատասխանատու պետական կառավարման մարմինը	Նշումներ	Եռամսյակներ			
			վերապատ-բաստողների վերապատբաստում ուսուցիչների համար:						